ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2014թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.193-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի «Երևանի Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող տարածքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» հ.193-Ա որոշման 1-ին կետում ««Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի ազգային հանձնաժողով» /ԻԿՈՄՈՍ/Հայաստան/» բառերից հետո լրացնել «,«Վասպուրական» հայրենակցական» բառերով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.193-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի ազգային հանձնաժողով» /ԻԿՕՄՕՍ/Հայաստան/, «Վասպուրական» հայրենակցական և «Պատմական հուշարձանների պահպանման հայկական դաշնություն» հասարակական կազմակերպությունները դիմել են Երևանի քաղաքապետարան՝ Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի հ.193-Ա որոշման մեջ լրացում կատարելու խնդրանքով։

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի հ.193-Ա որոշմամբ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Հանրապետության փողոցի հ.32 հասցեում գտնվող 130.9քմ մակերեսով տարածքը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 06.07.2004թ. հ.1459709 վկայական) անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2017 թվականի հունիսի 31-ը ժամկետով տրամադրվել է «Հուշարձանների և պատմական վայրերի պահպանության միջազգային խորհրդի Հայաստանի ազգային հանձնաժողով» /ԻԿՕՄՕՍ/Հայաստան/ և «Պատմական հուշարձանների պահպանման հայկական դաշնություն» հասարակական կազմակերպություններին։

Նշված տարածքում 1980 թվականից իր գործունեությունն է ծավալում նաև «Վասպուրական» հայրենակցական հասարակական կազմակերպությունը։

«Վասպուրական» հայրենակցական հասարակական կազմակերպությունը ՀՀ տարածքում գործող կամավոր, հայրենակցական, մշակութային, բարեգործական, հասարակական կազմակերպություն է, որը միավորում է հայազգի վասպուրականցիներին և նրանց ժառանգներին։ Կազմակերպությունը նպատակ ունի վառ պահել Վան-Վասպուրականի հիշողությունը, պատմական հայրենիքից անբաժան լինելու զգացողությունն ու նրան հավատարիմ մնալու գաղափարը՝ դրանք ավանդելով սերնդե-սերունդ։

Կազմակերպությունը իր գործունեությամբ լայնորեն լուսաբանում ու ժողովրդականացնում է Վան-Վասպուրականի պատմամշակութային ժառանգությունը, քաղաքակրթության զարգացման գործում նրա ներդրած ավանդը, ինչպես նաև Հայաստանում և արտերկրում բնակվող նշանավոր Վասպուրականցիների, գիտնականների, գրականության, արվեստի, ազգային-հասարակական և կրոնական գործիչների կյանքն ու գործունեությունը։

Կազմակերպությունն իրականացնում է նաև Վան-Վասպուրականի հերոսամարտը խորհրդանշող <<Արծիվ Վասպուրականի>> հուշակոթողի պահպանությունն ու բարեկարգումը և ամեն տարի մայիս ամսին հուշակոթողի մոտ կազմակերպում է Վան-Վասպուրականցիների ավանդական հավաք-դաշտահանդես՝ նվիրված հերոսամարտի տարելիցներին։

Հաշվի առնելով կազմակերպության կողմից իրականացվող գործունեության կարևորությունը ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի հ.193-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.193-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի հ.193-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.193-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի հ.193-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ